

# ԽԱԲՐԻԿՆԵՐ ՈՒՐՄԻԱՅԻՑ

Ուրմիոյ լճի արևմտեան գաւառները—Բարանդուզից մինչև  
Խոյ,—հիանալի են իրանց արգաւանդ դաշտավայրերով։ Այս  
բոլոր դաշտավայրերն էլ ջրառատ են և ծառաշատ։

Սահմանագլխային բարձր լեռներից մի քանի զուգահեռա-  
կան լեռնաբազուկներ են ձգւում դէպի Ուրմիոյ լիճը Նրանք  
քանի մօտենում են լճին, այնքան, կարծէք, մաշւում են ու ապա-  
հնոց լճի ափին կանգ են առնում։ Այս լեռների արանքում  
ծաղկում են Բարանդուզի, Ուրմիի, Նազլու-Զայի, Սալմաստի  
և Խոյի չքնաղ հարթավայրերը, որոնցից իւրաքանչիւրն ունի  
իր կենսատու գետը՝ Բարանդուզ-Զայ, Շահար-Զայ, Նազլու-  
Զայ, Զոլա և Կըզըլ-Մու գետերը մի մի փոքրիկ Նեղոսներ են  
իրանց հովտի համար։ Այս գետերից միայն առաջինի և վեր-  
ջինի ջրերն են աւելանում և ծովը թափում։ Միւսները մե-  
ծամեծ առուներով առատորէն բաշխում են իրանց հովիտների-  
մէջ գտնուող անդաստաններին և այգեստաններին, իսկ նրանց  
վրայ շինուած հոյակապ կամուրջների բազմաթիւ աշեերը չոր  
ու ցամաք են մնում։

Պարսկաստանին անծանօթ այցելուն՝ տեսնելով այս աեղե-  
րի հիանալի մշակուած տափաստանները և նրանց արգասարե-  
րութիւնը, անշուշտ երանի պիտի տար ընակիչներին, բայց  
դժբախտաբար, աշխատող-մշակող ձեռքը զուրկ է մնում իր  
արտադրած բարիքներից, որովհետև ստացուած արդիւն-  
քը անիրաւ կալուածատէր խաներն են խլում։ Նրանք  
կառուցանում են ամարանոցներ, այնքան յաղթ ու մե-  
ծածախս, որքան և անճաշակ ու տգեզ։ Այսպիսի շի-  
նութիւններ առատութեամբ ցըիւ են տուած Ուրմիի և  
Բարանդուզի զանազան ծառազարդ անկիւններում։ Զա-  
նազան Միր-Փանջներ, Ամիր-Դովլէններ, Մուսթաշարներ և  
չգիտեմ էլ ի՞նչեր, տարին հազիւ միքանի օր կամ միքանի ժամ  
անց են կացնում, իսկ մնացեալ ժամանակը այդ բոլոր շամա-  
բաթները ամայի և կողպուած են մնում։ Ահա թէ մըտեղ է

գնում բարեբեր՝ դաշտի և անխոնջ մշակի արտադրած հասոյթը, Որքա՞ն անաէտք ու աննպատակ են այդ տղրուկ ռամարաթները: Բարանդուղում, ճանապարհորդները յաճախ պատահում են մորից կազմած բլուրների: Ասում են՝ որ նախկին բնակիչների կրակապաշտութեան հետքերն են դրանք:

Ուրմիի գիւղերը ման գալի՛ պատահեցի մի զարմանալի տեսարանի: Մի կիսամերկ մարդ մտել է ջրի մէջ, գլուխը կուցրել է. մի ուրիշ անձնաւորութիւն էլ, ձեռքին մի գիրք բռնած, ջուր էր սրոկում միւսի գլխին: Խսկոյն մտքումս պատկերացաւ Քրիստոսի մկրտութիւնը: Հետաքրքրուեցի այս նորանշան գործողութիւնով և իմացայ, որ Ուրմիում արդէն յայտնի վանեցի Ասպատուրն է, որ կրիստոմկրտութեան խորհուրդն է կատարում: Այս մարդու մասին, որքան յիշում եմ, մի անգամ գրուած պիտի վնի մեր պարբերական թերթերից մէկում: Իր ասելով՝ հոգու փրկութեան այս ճշմարիտ ճանապարհը նա ուսել է Վանում, մի կոյր մուրացիկից: սակայն, որքան մեզ յայտնի է, անաբարդիսաներ չկան Վանում. ոչ միայն Վանում, այլև ամբողջ հայ ազգի մէջ դժուար թէ գրտնուի այս աղանդին հետևող: Անհրաժեշտ էր, որ Ուրմիում լինէր անպատճառ մի անաբարդիստ քարոզիչ, որպէսզի կրօնների և աղանդների խայտաճամուկ թիւը լրանար: Այստեղ կան աւետարանականներ, եպիսկոպոսականներ (ապրուկոպ) լուտերականներ, անաբարդիստներ, կաթոլիկներ, լուսաւորչականներ, նեստորականներ, մովսիսականներ (գուցէ և թալմուռականներ) շիա մահմէդականներ (գուցէ և սինիներ): Սրանք յայտնիներն են. հաւանօրէն կան բարիներ, գեաբրներ (կրակապաշտ պարսիկներ) և ուրիշ ծածուկ աղանդաւորներ, «չլաղ սէօնդիւրաններ» ևայլն:

Միայն ասորին ընդունակ է այսքան բազմազան աղանդների կեղծ հետեւողներ մատակարարել. խօսքս քրիստոնեայ աղանդների և դաւանութիւնների մասին է:

Ռուսալաւան ասորիները իիստ հիասթափուած են: Նրանք կարծում էին թէ դրանով Ուրմիին տէր կը դառնան: Բայց ուստի հիւպատոսը պարզապէս յայտարարեց նրանց սխալ ըմբռնումը և իր պաշտօնի սահմանները գծեց. այս բանից ապահովուած՝ թուրք կալուսածատէրերը ռուսադաւան ասորուն ամելի են ճնշում, քան բողոքականին և կաթոլիկին: Ռուսների գրաւած ասորական եկեղեցու համար նեստորականները դատ են բաց արել. կառավարութիւնը, միւս միսսիաները նեստորականների կողմն են. դատավարութիւնը շարունակուում է:

Շարունակուում է և Խոյի ճանապարհին սպանուած միսիօ-

նար Լարրի սահարի գործը: Թաւրիզի անգլիակա չհիւպատոսը իր երկու հնդիկ զինուորներով՝ սրբը մերկացրած է մանգալիս Ուրմիում: առում են, որ կառավարութիւնից օրական 50 թու- ման պիտի ստանայ մինչև գործի վախճանը: Ոճրագործ սէյիզը Թաւրիզ է տարրուած:

Յիշում եմ, որ մի անգամ Թաւրիզի աւետարանական գլուա- տոր քարոզիչ դոկտոր: Վիլսոն դժգոհութիւն յայտնեց, թէ Միա- ցեալ-Նահանգների կառավարութիւնը խիստ պահանջողական դիրք բռնեց: Նրա կարծիքով գործը մեղմութեամբ պէտք էր վերջացնել: Այս բանից յայտնի է, որ ամերիկական կառավարու- թիւնը առիթի էր սպասում իր զօրութիւնը ցոյց տալու համար:

Ուրմիոյ ճի արևմտեան գաւառների կեղրոնավայր Ուր- միա քաղաքի շուկան խիստ ընդարձակ է և հարուստ՝ արտահա- նելի նիսթերով: Բնակիչները գլխաւորապէս թուրք են. կան ասորիներ և քիչ թուով հրէաներ ու հայեր: Առևտուրը մեծ մասամբ թուրքերի ձեռքին է. հրէաները իրանց յատուկ ճո- թեղէնի առուտուրով են զրադում: Իսկ հայերը և ասորիները արհեստներով են պարապում: Վանից նոր նոր եկած արհեստա- ւորները յաջողութիւն են գտնում և շատերը ապահով վիճակ ստեղծերով ընտանիքներն էլ փոխադրում են վերջնականապէս: Այս ամառը նրանք քաղաքի պարսպից դուրս գնեցին մի ըն- դարձակ արտ՝ վանեցիական մի թաղ կազմելու համար:

Ուրմիի բազարը շատ աւելի զուտ պարսկական պատկեր է ներկայացնում, քան Աստրապատականի միւս քաղաքների բազար- ները: Այս բանը հէնց սկզբից աշքի է ընկնում: Պատահում էք տանեակ զոյդ դէրվիշների, որոնք փոխն ի փոխ երգում են, խանութներից ողորմութիւն իննդրելով: Թաւրիզի հոչակաւոր բազարում, դուք հազիւ էք պատահում երգող դէրվիշի: Նրանք՝ այստեղ, մի նախաղասութիւն շարունակ կրկնելով են փող խնդրում, իսկ Ուրմիում, դէրվիշը իր քաղցը ու զիւ ձայնով, ամբողջ պատմութիւններ է անում, թէ եղանակով և թէ նիւթի բովանդակութեամբ մեծ բաւականութիւն պատճառելով թուրք ժողովրդին. և ուրմեցին սիրով է ձգում իր ու փողը երգչ պարզած ամանի մէջ: Կայ դէրվիշների մի այլ տեսակ, որ ա- ռանց երգի, լոկ պատմութիւններ է անում: Դէրվիշի պատճառած բաւականութիւնից օգտւում է զինաւորաբար աղքատ դասա- կարգը, որ շըջան կազմած լսում է նրան:

Մի անգամ առիթ ունեցայ դիտելու, թէ ինչպէս կօշիկ կարկատողների մի բազմութիւն հետաքրքրութեամբ լսում էր մուսղէմ և Զոհրաբի պատմութիւնը: Շուրջանակի հաւաքուած բազմութեան կենտրոնում կանգնած էր դէրվիշ-պատմիչը: Նա

հազած էր երկար անթարի, գլխին մի թեթև գլխարկ, թևերը  
մինչև արմուկները վեր քաշած և ձեռքին մի կանգունաչափ  
փայտ: Նրա աչքերի փայլը բոլորովին հանգած էր «աստուա-  
ծային» աֆիօնի գործածութիւնից: Նիհար էր նա և դեղնած.  
սակայն պատմելիս մի այնպիսի աշխուժով էր շարժումներ  
կատարում ու պատոյտ գործում, որ դիակի ապաւորութիւն  
թողնող այդ արարածը պարզապէս զարմանք էր պատճառում:  
Պատմում էր եռանդով. ֆարսերէն լեզուն այնպիսի շեշտերով  
և առողջութեամբ էր արտասանում, որ երաժշտութեան  
տպաւորութիւն էր թողնում: Լսողները իրանց գործով էին զբաղ  
տում և երբ զգացուած պատմիչը իր ձայնի եղանակաւորումնե-  
րով ու շարժումներով դիցազներգութեան ամենայուղիչ տեսա-  
րաններն էր ներկայացնում, նրանք թողնում էին իրանց գոր-  
ծը և ամբողջապէս լսողութիւն դարձած՝ պատմողին էին նայում:  
Վերջում, սակաւապէտ դէրփիշը, իր սև փողերն առած՝ գորու-  
նակութեամբ հեռացաւ, մի ուրիշ տեղ էլ անշուշտ նոյնը և  
կամ մի ուրիշը պատմելու համար:

Դէրփիշի գուրեկան ձայնը հնչում է Ուրմիի ամեն կողմ-  
երում: Կալատեղերում մի զոյքը իր փայն ստացած հեռանում է,  
նրան յաջորդում է երկրորդը և այսպէս՝ սեխաստաններում,  
բանջարանոցներում: Ուրմիցի թուրքը գեռ այնքան չէ ճնշուել  
ապրուսափ հոգերով. բարեբեր հողը ապրուսաը խիստ հեշտա-  
ցընում է: Ուրմիում չկայ մուրացկանների այն ահազին բազ-  
մութիւնը, որին պատահում էք ուրիշ տեղերում և դրա հա-  
մար էլ ժողովուրդը մուրացկանին իր ողորմութիւնը չի զլա-  
նում: Դէրփիշներին ցոյց տրուած հրւասիրութիւնն է անշուշտ  
պատճառը, որ նրանց թիւը այդքան շատ է այս կողմերում:

Օգոստոսին առաջին անգամը լինելով մի քանի հայ երի-  
տասարդներ ցանկացան թուրքերէններկայացում տալ: Մի իրա-  
րանցում, շշուկ էր ընկել ամբողջ բազարում: Ներկայացման  
յայտարարութիւնը ձեռքէ ձեռք էր անցնում, չէին հասկանում,  
ինչ բան է: Յայտարարութեան վրայ տպուած էր ինն մուսա-  
ների պատկերը, որից եղրակացնում էին, թէ պին պէտք է խա-  
ղացնեն» կամ կապիկ պէտք է պար ածեն: Թուրքերը օտար տա-  
րազով պատահածներին քոնում, հարցնում էին, բայց ամենկին  
գլխի չէին ընկնում: Այս դէպքը նորութիւն էր, ուստի մոլե-  
ռանդ մահմեզական հոգեռականութիւնը ցանկացաւ իր ամենա-  
կարող «արգելում եմ»-ը դնել: Ներկայացման օրը, երբ ամեն ինչ  
պատրաստ էր, ահա քաղաքագուխը լուր է ուղարկում և յայտ-  
նում, որ մոլլաների ցուցմամբ, ստիպուած է արգելել. միաժա-  
մանակ և ետ էր կանչել վարձուած զինուորական երաժշտա-

կան խումբը։ Օտարահպատակները պատասխանեցին, թէ իրանք կը ներկայացնեն, տեսնենք ի՞նչպէս կարող են արգելել։ Ներկայացումը տեղի ունեցաւ, որի ժամանակ մի քանի սպիտակագլուխներ—երեխ յատկապէս ուղարկուած—յանկարծ ներս մտան և դիտել սկսեցին։ Նրանց հրաւիրեցին նատելու։ Նրանք ընդունեցին հրաւէրը և մինչև վերջը ապօշ կրթած դիտեցին և տեսան, որ զուրանին հակառակ բան չկար «օյինբազների» սարքած խաղում, Բոլոր հանդիսականները շատ գոհ էին իրանց համար այս նոր տեսարանով։ Շատերը տոմսակ գնել էին, բայց երկիւղից չեկան, իսկ եկողները զարմացան իրանց մոլաների անմիտ հրամանի վրայ։

Գալուստ

## ՄԵՐ «ԽՈԶԵՒՆՆԵՐԸ» ԵՒ «ԱՆԾՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ»

«Ընթերցասիրութիւնը չի զարդանում հայ հասարակութեան մէջ և հայ գրքի ու պարբերական մամուլի նուաճումները, ընթերցող շրջաններում, չափազանց դանդաղ են առաջ գնում.՝ ահա մեր իրականութեան ամենացաւոտ հարցերից մէկը, որը միշտ կոշմարի պէս ցցուած է եղել մեր գրագէտների և ամերող գրականութեան առաջ, նրա սկզբնաւորութիւնից մինչև այժմ։ Մեր գրականութիւնը իր ծանրաշարժ առաջինացութեան միջոցին միշտ ուժգնապէս բաղխուել է այդ կոշմարին և երեկի դեռ երկար նրա ճակատը քերծուածներ պիտի ստանայ այդ բաղխումներից։

Ի՞նչպէս և ինչո՞վ կարելի է բացատրել հասարակական այս հիւանդութեան մամուլը, բնականաբար, շատ է զբաղում դրանով և առանձնապէս «Մուրճը» իր ճներքին տեսութիւններում յաճախ է շօշափել այդ հարցը, մօտենալով նրան զանազան կողմերից և տարրալուծելով իրերն ու երեսութեանը, որքան այդ թոյլ են տուել հանգամանքները։

«Մուրճի» յարգելի յօդուածագիրը այս տարուայ Զ-րդ համարում քննելով անընթերցասիրութեան պատճառները և ընթերցողներ որոնելով հայերէն իմացող «ինտէլիգէնտ» ար-